ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ.

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) փաթեթի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշման 1-ին հավելվածով նախատեսված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցառումների 56-րդ կետի կատարման անհրաժեշտությամբ, որով առաջարկվում է խստացնել ճանապարհային անվտանգությանը սպառնացող, ինչպես նաև ճանապարհներին հասցված վնասների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տուգանքների և պատասխանատվության միջոցները:

2. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը՝ վերջին 10 տարիներին Հայաստանում ՃՏՊ-ների հետևանքով զոհերի թիվն աճել է՝ եթե 2010 թվականին այդ թիվը 294 էր, ապա 2020 թվականին այն հասել է 348-ի, 2021 թվականին՝ 367-ի, իսկ 2022 թվականին՝ 321-ի: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայումս մշակվում է Հայաստանի ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարության նախագիծը, որով նախատեսվում է, որ Հայաստանում ճանապարհային անվտանգության ամենաբարձր մակարդակին հասնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ ՄԱԿ-ի սահմանած «Տեսլական զրո» (Vision Zero), և «Անվտանգ համակարգային մոտեցում» (Safe System Approach) քաղաքականությանը, ինչպես նաև ՄԱԿ-ի ճանապարհային անվտանգության բարելավման մասին փաստաթղթի (UN General Assembly Resolution on Improving Road

Safety (A/70/L.44) պահանջներին հասնելու համար: Նշենք նաև, որ Ճանապարհային անվտանգության բարելավման հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակի հանդիպմանը ՀՀ-ն ստանձնել է համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու պարտավորություն՝ մինչև 2050 թվականը ճանապարհներին զրո մահեր և լուրջ վնասվածքներ, և մինչև 2030 թվականը ճանապարհներին մահացությունների թիվը կրկնակի կրճատելու նոր միջանկյալ թիրախներին հասնելու համար:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու կարգի խախտման (140-րդ և 150[2]-րդ հոդվածներ) համար կիրառվող տույժերը և տուգանքները սահմանվել են դեռևս 2006 թվականից: 2006-2022թթ. գնաճի ցուցանիշը կազմում է շուրջ 93.83 % (աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական էլեկտրոնային կայք), իսկ օրենսգրքով նախատեսված իրավախախտումները նշված հոդվածները փոփոխության չեն ենթարկվել: Այսինքն գործող օրենսգրքով օրինազանց քաղաքացիների համար սահմանված պատասխանատվության միջոցները կորցրել են իրենց արդիականությունը, և հետևաբար՝ վերանայման կարիք ունեն: Ներկայում ճանապարհներից օգտվողների կողմից (վարորդներ, հետիոտն և այլն) ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հաճախ հասցվում են նյութական վնասներ, այդ թվում՝ արձանագրվել են ճանապարհային նշանները փակելու, հանելու, անօրինական նշաններ տեղադրելու կամ ճանապարհային նշանների գողության, ինչպես նաև ճանապարհային երթևեկության համար խոչընդոտներ ստեղծելու բազմաթիվ դեպքեր: Օրինապահ մարմինների կողմից բազմաթիվ դեպքեր են բացահայտվել նաև, երբ գողացված ճանապարհային նշանները վերջիններիս կողմից օգտագործվել են կենցաղային նպատակներով (հատկապես գյուղական բնակավայրերում): Կատարվել են վերլուծություններ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, ինչպես նաև ճանապարհները սպասարկող կազմակերպությունների՝ ճանապարհային նշանների և արգելափակոցների վնասման, գողության դեպքերի վերաբերյալ տրամադրած տվյալների հիման վրա, որի արդյունքում պարզվել է, որ կազմված արձանագրությունների հիման վրա իրականացվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննություն, նշանակվել համապատասխան տույժեր: Միաժամանակ, ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից 2020-2022 թվականներին ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, դրանց

կահավորանքի (ճանապարհային նշաններ, լուսացույցեր, ազդանշանային սյուներ, պարսպող հարմարանքներ) վնասման և գողության փաստերով արձանագրվել է թվով 28 դեպք, որից 23-ը բացահայտվել է:

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին տեղադրված ճանապարհային նշանների, արգելափակոցների գողության, վնասման և ապամոնտաժման դեպքերի վերաբերյալ վերջին 3 տարիների ժամանակահատվածի համար կատարվել են վերլուծություններ՝ թվով 29 ճանապարհաշինարարական ընկերությունների տրամադրած տվյալների հիման վրա (որից ճանապարհները սպասարկող 15 ընկերությունների կողմից հայտնաբերվել են ճանապարհային նշանների և արգելափակոցների վնասման ու գողացման դեպքեր): Ընդհանուր առմամբ ուսումնասիրվող ժամանակահատվածում միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներից գողացվել և վնասվել է շուրջ 661 ճանապարհային նշան, ինչպես նաև գողացվել և վնասվել 678 գծամետր արգելափակոց: Հաշվի առնելով, որ 1 ճանապարհային նշանի միջին գինը կազմում է շուրջ 30000 դրամ, իսկ 1 գծ.մետր արգելափակոցների գինը՝ շուրջ 45000 դրամ, ապա կարելի է փաստել, որ վերջին երեք տարիների ընթացքում պետությանը հասցվել է շուրջ 50,340,000 դրամի վնաս (19830000դրամ/նշան+30510000գծմ/արգելափակոց): Գողացված, վնասված նշանները և արգելափակոցներն ըստ ճանապարհաշինարարական ընկերությունների, ավելի մանրամասն ներկայացվում է նաև ստորև գծապատկերի տեսքով.





Յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեից մեծածավալ ֆինանսական

միջոցներ են տրամադրվում ճանապարհների պահպանման և հիմնանորոգման համար, որը նպատակ ունի բարելավել ճանապարհային ենթակառուցվածքի որակը և ապահովել ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության անընդհատությունն ու անվտանգությունը:

Վերը նշված օրինազանցությունները հանգեցնում են ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերի և ՃՏՊ-ների թվի աճին, ինչպես նաև պետությանը պատճառում են խոշոր չափերի հասնող ֆինանսական վնասներ: Եվ թեև պետական ճանապարհային և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի լիազորած պետական կառավարման մարմինների կողմից իրականացվում են ճանապարհային անվտանգության ապահովման տեսանկյունից բազմաթիվ միջոցառումներ, ճանապարհից օգտվողները չեն գիտակցում իրենց կողմից կատարված օրինազանց գործողությունների հետևանքով պետությանը և մարդկանց պատճառվող վնասի աստիճանը: Այդ են վկայում պետական ճանապարհային մարմնի կողմից արձանագրված բազմաթիվ դեպքերը, երբ օրինակ որոշ տնտեսվարողներ կամ քաղաքացիներ ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին իրականացնում են տեղադրում են ապօրինի ճանապարհային նշաններ: Վերջիններս երբեմն գիտակցաբար են կատարում նշված իրավախախտումները և նույնիսկ պատրաստ են վճարել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավախախտման համար սահմանված տույժ և/կամ տուգանքը կամ խուսափել պատասխանատվությունից:

Պետք է նշել, որ յուրաքանչյուր իրավախախտում՝ գողացված կամ վնասված ճանապարհային նշան կարող է ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) պատճառ դառնալ: ՃՏՊ-ները և դրանց հետևանքով առաջացած մահերը և վնասվածքները թե՛ մարդկային և թե՛ նյութական կորուստների աղբյուր են հանդիսանում: Դրանք բացասաբար են ազդում նաև տնտեսության վրա: Ըստ գնահատումների՝ ՃՏՊ-ները նվազեցնում են Հայաստանի ՀՆԱ-ն առնվազն 1%-ով, և կազմում են ՀՆԱ սոցիալ-տնտեսական ծախսերի մոտ 5%-ը («Ճանապարհների միջազգային գնահատման Ծրագիր» (iRAP) կազմակերպությունը կիրառում է հետևյալ բանաձևը՝ մահ=GDP/մարդ×70, լուրջ վնասվածք=GDP/մարդ×17.5:

Միաժամանակ ճանապարհների և ճանապարհի այլ ինժեներական կառույցների կամ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների վնասման, փակման, հանելու կամ անօրինական տեղադրելու, ինչպես նաև

ճանապարհային երթևեկության համար խոչընդոտներ ստեղծելու համար Քրեական օրենսգրքով տույժ և/կամ տուգանքներ սահմանված չեն, մինչդեռ դրանց հանրային վտանգավորության աստիճանը թույլ է տալիս դրանց քրեաիրավական որակում տալուն:

Ուստի, իրականացվում են համապարփակ միջոցառումներ ՃՏՊ-ների թվի նվազեցման, ճանապարհային անվտանգության ապահովման համար (ՃՏՊ-ների կուտակման տեղերի հայտնաբերում, նախականխում, ՃՏՊ-ների որակական և քանակական վերլուծություն, ինչպես նաև ՃՏՊ-ների առաջացման պատճառների կանխարգելում):

Նշված միջոցառումների համատեքստում անհրաժեշտ է խստացնել նաև ճանապարհներից օգտվողների համար ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու կարգի խախտման համար սահմանված պատժամիջոցները:

3. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ.

Նախագծերով առաջարկվում է խստացնել օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու կարգի խախտման համար սահմանված պատասխանատվության միջոցները:

Մասնավորապես՝

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 140-րդ հոդվածով ճանապարհները, երկաթուղային գծանցները և ճանապարհի այլ ինժեներական կառույցները վնասելու համար սահմանվում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, մինչդեռ կատարված իրավախախտմամբ հանրությանը և պետությանը պատճառվում է ավելի մեծ չափերի հասնող նյութական վնաս, ինչպես նաև հանգեցնում է ՃՏՊ-ների ավելացմանը: Այդ իսկ պատճառով նախագծով նախատեսվել է սահմանված տուգանքը եռապատել՝ հասցնելով նվազագույն աշխատավարձի յոթանասունհինգապատիկի, ինչպես նաև՝ եթե նախատեսված արարքները կատարելու հետևանքով անձի առողջությանը պատճառվել է թեթև վնաս՝ նախատեսվել է սահմանված տուգանքը եռապատել՝ հասցնելով նվազագույն աշխատավարձի իննսունապատիկի:

2. Առաջակվում է վերանայել Օրենսգրքի 150[2]-րդ հոդվածի տույժ տուգանքները՝ եռապատկելով դրանք, այդ թվում՝

1) ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների կողային առուները ոռոգման նպատակով օգտագործելու, երթևեկամասի և կողնակների վրա կողմնակի առարկաներ թողնելու, չնախատեսված հատվածներում տրանսպորտային միջոցների ճանապարհից դուրս գալու կամ ճանապարհ մտնելու, ինժեներական շինությունների (երթևեկելի մասի, կողնակների ու մայթերի, հետիոտն և հեծանվաուղիների, կամուրջների, ավտոտաղավարների և այլ կառույցների, ճանապարհային նշանների, լուսավորող սարքավորումների, պարսպումների ու կանաչ տնկիների) վնասման և աղտոտման համար՝ միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ տուգանքները սահմանել նվազագույն աշխատավարձի հարյուր քսանապատիկի, իսկ հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վաթսունապատիկի չափով:

2) ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների երթևեկելի մասով և բաժանարար գոտիով անասուններ քշելու, ճանապարհի պաշտպանական գոտում առանց մշտական հսկողության անասուն արածեցնելու համար՝ տուգանքի չափը սահմանել նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով:

3) ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում ինքնակամ պլակատներ, ցուցանակներ, ազդագրեր կամ այլ առարկաներ տեղակայելու այն դեպքերը, որոնք չեն պարունակում ճանապարհային նշանների տարրեր կամ պարունակում են գովազդի տարրեր՝ առաջարկվում է **նախազգուշացումից հետո վեց ամսվա** ընթացքում արարքը կրկին կատարելու դեպքում կիրառել տուգանք միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները.

Օրենսգրքի հոդվածը և մասը	**Բովանդակությունը**	**Գործող օրենսգրքով սահմանված տուգանքի չափը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի**	**Նախագծով առաջարկվող տուգանքի չափը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի**

140-րդ հոդված, 1-ին մաս	Ճանապարհները, երկաթուղային գծանցները, ճանապարհի այլ ինժեներական կառույցները կամ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները վնասելու, փակելու, հանելու կամ տեղադրելու, ինչպես նաև ճանապարհային երթևեկության համար խոչընդոտներ ստեղծելու (այդ թվում՝ ճանապարհի ծածկույթը աղտոտելու, առանց համապատասխան թույլտվության ճանապարհի վրա բացօթյա առևտուր իրականացնելու, շինարարական նյութեր կամ այլ իրեր ու առարկաներ ճանապարհին թողնելու միջոցով)՝ դեպքերում առաջացող տուգանքի չափը	25-ապատիկ	75-ապատիկ
140-րդ հոդված, 2-րդ մաս	Առանց համապատասխան թույլտվության կամ իրավասու մարմինների հետ համաձայնեցման՝ ճանապարհի վրա շինարարական աշխատանքներ կատարելու կամ գովազդ տեղադրելու, ինչպես նաև ճանապարհների հետ հատումներ բացելու դեպքերում	25-ապատիկ	75-ապատիկ
140-րդ հոդված, 4-րդ մաս	Ինքնակամ ճանապարհային նշաններ (այդ թվում՝ ինքնաշեն) տեղադրելու կամ ապամոնտաժելու, ինչպես նաև ինքնակամ գծանշումներ կատարելու կամ դրանք փոփոխելու դեպքերում	25-ապատիկ	75-ապատիկ
140-րդ հոդված, 5-րդ մաս	Առանց համապատասխան թույլտվության կանգնակների, արգելապատնեշների կամ այլ պարագաների միջոցով երթևեկելի մասը սահմանափակել դեպքերում	25-ապատիկի չափով՝ սահմանափակող իրերի և առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա	75-ապատիկի չափով՝ սահմանափակող իրերի և առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա
140-րդ հոդված,	Եթե 140-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով	30-ապակիկ	90-ապակիկ

6-րդ մաս	նախատեսված արարքները կատարելու հետևանքում անձի առողջությանը պատճառվել է թեթև վնաս		
150.2-րդ հոդված, 1-ին պարբերություն	Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների կողային առուները ոռոգման նպատակով օգտագործելու, երթևեկամասի և կողնակների վրա կողմնակի առարկաներ թողնելու, չնախատեսված հատվածներում տրանսպորտային միջոցների ճանապարհից դուրս գալու կամ ճանապարհ մտնելու, ինժեներական շինությունների (երթևեկելի մասի, կողնակների ու մայթերի, հետիոտն և հեծանվաուղիների, կամուրջների, ավտոտաղավարների և այլ կառույցների, ճանապարհային նշանների, լուսավորող սարքավորումների, պարսպումների ու կանաչ տնկիների) վնասելու և աղտոտելու դեպքերում	40-ապատիկ	120-ապատիկ
150.2-րդ հոդված, 2-րդ պարբերություն	Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների երթևեկելի մասով և բաժանարար գոտիով անասուններ քշելու, ճանապարհի պաշտպանական գոտում առանց մշտական հսկողության անասուն արածեցնելու դեպքերում	5-ապատիկ	15-ապատիկ
150.2-րդ հոդված, 4-րդ պարբերություն	150.2-րդ հոդվածով նախատեսված արարքները նախազգուշացումից հետո կրկին կատարելու դեպքերում՝	Մեկ տարվա ընթացքում	Վեց ամսվա ընթացքում
	Միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով	50-ապատիկ	150-ապատիկ
	Հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների մասով	10-ապատիկ	30-ապատիկ

3. Միաժամանակ առաջարկվում է Քրեական օրենսգրքի «**Տրանսպորտային միջոցները, ենթակառուցվածքները կամ հաղորդակցության ուղիները փչացնելը»** հոդված 346-ում կատարել փոփոխություններ, համաձայն որի՝ խմբագրվել է հոդվածի 1-ին մասը՝ նախատեսելով, որ տրանսպորտային միջոցը, ենթակառուցվածքը, հաղորդակցության ուղին կամ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները, ազդանշանման կամ կապի միջոցը, կամ տրանսպորտային համակարգի այլ տարրերը, կամ տրանսպորտային այլ սարքավորումը ոչնչացնելը, վնասելը, ապամոնտաժելը, արգելափակելը, կամ այլ կերպ փչացնելը, կամ երթևեկությունը կարգավորող նշաններ կամ այլ տեխնիկական միջոցներ ինքնակամ տեղադրելը, ինչպես նաև ճանապարհային երթևեկության անվտանգության համար ապօրինի խոչընդոտներ ստեղծելը, եթե այդ արարքը մարդու առողջությանը անզգուշությամբ պատճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս, ապա դա կարող է առաջացնել գործող հոդվածով սահմանված պատժամիջոցները:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ.

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է բարձրացնել ճանապարհներին և ճանապարհային ենթակառուցվածքներին վնասման հետևանքով պետությանը հասցված վնասի համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տուգանքների չափերը և խստացնել պատասխանատվության միջոցները, ինչը նպատակ ունի վարչական կամ քրեական իրավախախտում կատարած անձին դաստիարակել օրենքները պահպանելու համար: Նախագծերով սահմանված պատասխանատվության միջոցների սահմանման առաջնահերթ նպատակ է կանխել նոր իրավախախտումներ կատարելը, ճանապարհներից օգտվողների մոտ ձևավորել իրավախախտում թույլ տալուց զերծ մնալու համոզմունքը, այդ թվում՝ իրավախախտման համար պատասխանատվության ենթարկվելու անխուսափելիությունը գիտակցելու միջոցով:

5. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ.

Նախագծերի փաթեթը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից:

6. ԿԱՊԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026ԹԹ. ԾՐԱԳԻՐ, ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՎ/ԿԱՄ ԱՅԼ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Նախագծերը բխում են ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1902-Լ որոշման 56-րդ կետի պահանջներից, այն է՝ ճանապարհներին հասցված վնասների, այդ թվում՝ ճանապարհային նշանների և կահավորանքի այլ տարրերի գողության և/կամ վնասման համար պատասխանատվության խստացում: